

Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, աշխատությամբ՝ Սարգիս Հարությունյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2006, 506 էջ:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի նոր աշխատությունը նվիրված է հայ հմայական և ժողովրդական աղոթքներին: Ս. Հարությունյանի հիշյալ գործը ամրող-ջապես նորություն է ոչ միայն հայ բանագիտության, այլև մշակութարանության պատմության մեջ առհասարակ: Հեղինակը նրա մեջ ուրվագծում է ավանդական բանահյուսության մի ամբողջ համակարգ՝ հայ հմայական բանահյուսության բոլոր տեսակներով, որոնք ենթարկված են տիպարանական խոր մեկնարաններն: Գիրքը հեղինակի երկար տարիների աշխատանքի և տքնազան որոնումների արդյունքն է. «Հարկ է նշել նաև, որ սույն համահավաքը արդյունք է տարիների տևական ու տքնազան աշխատանքի: Կյուրերի հավաքումն սկսվել է տակավին 1960-ական թվականների սկզբներից, երբ հեղինակը նպատակ էր դրել մի քանի հասորում ընդգրկել հայ հմայական բանահյուսության բոլոր ժանրերի համահավաքը բնագրերը՝ դրանց նվիրված ընդարձակ ուսումնասիրությամբ: Աշխատանքները որոշ ընդհատումներով, շարունակվել են նաև հաջորդ տասնամյակներին: Այդ ծրագրի իրագործման առաջին արդյունքը եղավ 1975-ին հրատարակված «Անեծքի և օրինանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» մենագրությունը: Երկրորդ արդյունքն, ահա, հմայական-ժողովրդական աղոթքների ներկա համահավաքն է: Բայց անեծքների, օրինանքների և երդումների բնագրերը, որոնք կուտակված են հեղինակի ձեռքի տակ, սպասում են իրենց գիտական համակարգմանն ու հրապարակմանը» (էջ 55):

Աշխատության հեղինակը գրքի սկզբում գետեղել է ընդարձակ «Ներածություն», որը ներկայացնում է բանահյուսական ու միջնադարյան գրական այս տեսակի վերաբերյալ հայ և օտարազգի հեղինակների գիտահետազոտական ուսումնասիրությունների այսօրվա դիտակետերը: Ինչպես պահանջվում է

նման դեպքերում, Սարգիս Հարությունյանը, հարցի պատմությունը ծավալում է ինպրի այլ ժողովուրդների գրական դրսորումների շառավղով, որի շնորհիվ առավել հստակվում և հարստացվում է նրա մեկնությունը: Հնության հմայրը կարող են զգալ միայն մարդկության վաղնջական ժամանակների մտածողության բանալիններն ունեցող մասնագետները: Սարգիս Հարությունյանը դրանցից մեկն է, եթե ոչ այսօր մեզանում լավագույնը: Առաջին պահ նույնիսկ պարզունակ թվացող հմայական այդ աղոթքներում կան այնքան մուր տեղեր, որոնք հիմա էլ մնում են անհասկանալի համապատասխան մեկնական նյութերի բացակայության պատճառով: Հմայական աղոթքները ծնվել են մարդու բանական դրսորումների առաջին քայլերի հետ, և եթե քրիստոնեական շրջանում ստեղծված բանահյուսական հմայական աղոթքների մեջ հասկանալի շերտերն ավելի հասկանալի են, ապա հեթանոսականից քրիստոնեականին անցածները՝ առավել մշուշապաս:

Սարգիս Հարությունյանը, հենվելով որոշ անվանի հետազոտողների կարծիքների վրա, հմայական պատկերացումներն ու հավատալիքները կապում է քարանձավարնակ նեանդերթայան մարդու ժամանակների հետ<sup>1</sup>:

<sup>1</sup> Տեղին էր հիշել հմայիլի հետևյալ բացատրությունը. ×Amuleto, (յառ. amuletum), Ցուտություն, Ցուտություններ, Բժիշկ, Թասպուտ, Կղարթք, Հմայեակ, Մաձկերեն համայիլ: Նիւթ սրբազն եալ ի կանոնակալ և ի նանրահաւատ կարծեաց կամ ի կախարդասարաց յօրինեալ, զոր կախեն զպարանցաւ առ ի հալածել զդիս, զիիւանդութիւնս, զձախողակ և այլն: Ի բաղդէացւց և զեզիացւցւց ենուտ առ Յոյնս և առ Հոռվմայեցիս սովորութիւնն կրելոյ հմայս պահպանականս: Ազգի վայրենիք Ավրիկեայ և Ամերիկայ և մահմերականք և արաբացիք կրեն յաձախ յուռությունս և ընծայեն նոցաւ զօրութիւն մեծ: Կօրինին յուռութուլունը ի զանազան ազնիւ քարանց,

Բանագետն իր գրքում հմայական արվեստի մեջ դիտարկում է հետևյալ տիպարանական բաղադրիչները.

ա) հմայական պատկերացումներ և հավատալիքներ (=սնահավատք), որոնցից ծագում են հմայական արարողությունները,

բ) հմայական արարողություններ, որոնք այդ հավատալիքների գործնական իրականացումն են,

գ) հմայական արարողություններին ուղղվող անկախ խոսքեր՝ քանաձներ, որոնք հանդես են զալիս բանավոր ու գրավոր ձևերով:

Սարգիս Հարությունյանը խոսում է նաև զանազան հմայական առարկաների ու իրերի մասին (հուություններ, քայլիսաններ և այլն), որոնք կիրառական նշանակություն ունեն:

Նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին հայկական հմայիլներին նվիրված իր ծավալուն ու մեծարժեք ուսումնասիրության մեջ հայկական հմայիլների նշանակությունը դիտարկում է երկու տեսակետից. «Դրանք ծառայում էին երկու առումով. մի կողմից մարդուն հաստատուն ձևով ապահովում էին հմայական խոսքում թվարկված առանձին-առանձին կամ ընդհանուր տարրեր տեսակի հարվածներից ինչպես չար աշքից, մուս կողմից ազդարարում և արգելակում՝ էին որևէ պատահարի հնարավորությունը՝ հեռացնելով որոշված կախարդանքը, նրա համար դեղ ու դարման բերելով։ Հետո յուրաքանչյուր դեպքի համար ընտրվում էր համապատասխան հմայիլի բնագիր, զատված արտագրվում, և այդ օրինակը դառնում էր առանձին զիր»<sup>2</sup>:

Սարգիս Հարությունյանը հիշեցնում է մարդկության հին հավատալիքների հետագուստողներ Ա. Լեմանի և Ս. Տոկարի այն մտքերը, ըստ որոնց հմայության հիմքը սնո-

տիպաշտությունն է: Հետազոտողն իրավացիորեն նկատում է այսօրվա մարդու մեջ եղած սնուտիպաշտական դրսնորումները, որոնք երեան են զալիս զանազան առարկաների, իրարրությունների ավանդական հնամենի ընկալումներից: Օրինակ՝ կատուն երեսը լվանում է, ուրեմն կյուր է զալու, աղը քափվում է, ուրեմն տանը կորիվ կլինի կամ եթե նորալումնի ժամանակ դրամ ցուց տրվի նորալունին, ապա ողջ ամիսը այդ մարդը դրամով ապահովված կլինի, իսկ եթե այդ մարդը գորեղ կենդանու միրտ ուտի, ինքն էլ քաջ ու սրտու կդառնա և այլն, և այլն:

Շատ հետաքրքիր է «Ներածության» «Հմայությունն իրքի սիմվոլային փոխարերություն» բաժինը, որում հստակ ձևով բացատրվում են հայկական մտածելակերպում յուրօրինակ կիրառություն ստացած հմայական ստվորությունների խորհրդանշային բնույթը: Այդ սիմվոլիկ արարողությունը կատարողները հասկանում են խորհրդանշիշի հմաստը: Բերվում են տարբեր օրինակներ՝ պատմական Հայաստանի ամենատարբեր շրջանների բանահյուսությունից քաղված: Հաստ որում, նույն խորհրդանշիշը երեսն նույն երկրի տարբեր տարածքային հասովածներում կարող է այլազան ընկալում ունենալ. «Հմայական սիմվոլային արարողությունները, ինչպէս առհասարակ սիմվոլային-փոխարերական բանահյուսության մեջ սիմվոլային պատկերները, իրենց իմաստի նկատմամբ կարող են ծառայել տարբեր նպատակների: Մեկ սիմվոլային արարողությունը տարբեր տեղերում կարող է տարբեր նպատակներով կիրառվել» (էջ 71): Հնադարի և միջնադարի խորհրդանշային համակարգը շատ հարուստ դրսնորումներով երեան է եկել հայ միջնադարյան գրականության մեջ:

Մաշտոցի անվան մատենադարանում կան գրչագիր մատյաններ, օրինակ՝ 7703, որոնք բացատրում են հայ միջնադարյան գրականության մեջ եղած սիմվոլները: Սիմվոլների մեկնաբանումը միջազգային բանասիրության մեջ ունի բազմաթիվ գիտական դրսնորումներ: Սակայն, ցավոր, շատ գրքերում քրիստոնեական և հեթանոսական սիմվոլների տարբեր ազգերի գրականություններից բերված օրինակներում գրեթե չեն հանդիպում հայ գրականությունից քաղված օրինակներ: Մինչդեռ այդ նմուշները շատ կիարստացնեին համբարձանուր և միջազգային գրական ընկալումները: 1971-ին Նյու Յոր-

եռանկինաձև կամ այլաձև հաստեալ, յորոց վերայքանդակին տարք ինչ խորհրդաւորք կամ իմաստոր ինչ ի շուրանէ: Էլինին ևս փորբիկ առնապատկերը ասսուծոց, մետապեայր կամ քարելէնք կամ ծրարք ինչ կախարդականք, որք և ասին Աղանդիք, Փաթան կամ Փաթէք: Ենուս և առ քրիստոնեայս սովորութիւնն կրելոյ թժման ի ներքոյ հանդերձից, որ և յաճախեալ էր ի միջին դարու և արգելեալ յեկեցոյ 99999 (Քառզիր արուեստից և զիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, յօրինեալ ի. հ. Մանուկ վարդապետ Քաջունի, հ. 1, Ա-Լ, Վենետիկ, 1891, էջ 93):

<sup>2</sup> F r é d é r i c F e y d i t. Amulettes de l' Arménie chrétienne. Venise, 1986, p. 5.

քում անզերենով լույս է տեսել սիմվոլների ծավալուն մի բառարան, որում բացատրված խորհրդանշներից են նուոր, թգուկը, վարդը, արծիվը, շրջանակը, խաչը, նավը, մարմինը, արագիլը, թոշունը, շուշանը և այլն<sup>3</sup>:

Երկար տարիներ զբաղվելով հանելով կերպով և դրանց վերաբերյալ հրատարակելով երկու աշխատություն՝ բանագետը դիտարկում է հանելուկի ժանրի և հմայությունների որոշ աղերսներ: Նա բացատրում է ինի ժամանակներից եկող խոսքի պաշտամունքի ստեղծվելը. «Բանաստեղծի (իմա քրիս) գործը խոսքն է, խոսքը (բան) հյուսելը, ստեղծելը, կերտելը, որից բանահյուս, բանաստեղծ, քերթող հասկացությունները» (Էջ 27): Այս եզրահանգման հաստատման համար բանագետը օրինակներ է բերում հնագույն սրբազն մատյաններից «Ըիզվեղայից», «Ավեստայից», «Ավետարանից»: Խոսքը դիտվում է որպես տիեզերաբանական սկզբունք: Հայ Ճր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի», «Նոր բառզիրք հայկազեան լեզուի» հեղինակների, Ստ. Մալյսայանցի «Հայերեն բացատրական բառարանի»՝ ներկայացվում է հմայել բառի իմաստի նախնական, պաշտամունքային-ծիսական ընկալումը, որը հետազոտում անցել է միջնադարյան քրիստոնեական մոտածողությանը: Բանագետի համեմատական քննությամբ բառի արմատական իմաստը դառնում է օրինությունը և դրանից ակնկալվող երջանկությունը: Հմայական բանաձեռնությունը մեջ բաժանվում են պարզ և բարդ տեսակների: Հմայությանը գումարվում է առ Աստված ուղղված հղորագույն միջոցը՝ աղորժը: Քրիստոնեական կրոնում աղորժը հավատացյալ անհատական ու անմիջական կապն է Աստծու հետ. դիմումի այս ձևը ևս սերում է հեթանոսական շրջանի պաշտամունքային ծեսերից, միայն թէ միջնադարյան աղորժներում Հիսուսն է, Մարիամը, հրեշտակները, որոնց աղերսում է հավատացյալը՝ ակնկալելով անկերապահ օգնություն: Երբեմն աղորժը երևան է գալիս նաև այն վայրը, որի բնակիչն է հմայիլ-աղորժ ասողը: Մի սիանի Անգեղակոր գյուղում զբաղված ա-

դորք-հմայիլում, որն ուղղված է չար աչքի դեմ, միահյուսված հանդես են գալիս հայկական աշխարհագրական սրբությունները և ավետարանականը.

Իշուխուրա սարը  
Եվ Քամու խաչը.  
Չար աչքին՝ չար փուշ,  
Չար սիաթին՝ չար փուշ,  
Չար մամենտին՝ չար փուշ:  
Սուրբ Վարդանեար և Զըր,  
Սուրբ Փիրդաղի և Կարմիր վանքը  
Չար աչքին՝ չար փուշ:  
Չար մամենտին՝ չար փուշ,  
Սարիամ Աստվածածինը.  
Չար աչքին՝ չար փուշ:  
Հունան մարգարեն,  
Ծառա սուրբ Հովհաննեար,  
Վառվառ ճգնավորը,  
Սուրբ Գևորգը.  
Չար աչքին՝ չար փուշ:  
Գրիգոր Լուսավորիչը,  
Սուրբ ճգնավորը.  
Չար աչքին՝ չար փուշ:  
Չար սրբաթին՝ չար փուշ,  
Չար մամենտին՝ չար փուշ (Էջ 93):

Պարտիզակում ստեղծված մի հմայիլում, որը նույնպես ուղղված է չար աչքի դեմ, հանդես է գալիս ավետարանական Գալիխա տեղանունը և հիշատակվում է Հիսուսի պարտեզը:

Էլանը զացանք Գալիխա,  
Գալիխան ծով մը կար,  
Ծովուն մեջ ծառ մը կար,  
Ծատին վրա բուն մը կար,  
Բնին մեջ հավկիթ կար  
Հավկթին մեջ ձագ մը կար.  
Ան ձագը անդանակ մորթեցին,  
Անկրակ եփեցին.  
Ով կերակ զարմացակ,  
Ով չկերակ ձարթեցակ:  
Աչք ընողուն աչքը ձարի.  
Աղեկ չոճուխին օրնեն կառնին  
Աղեկ կրիյան փերշրմեն կառնին,  
Աղեկ եղան լիծեն կառնին,  
Աղեկ գուշուն կուտշեն կառնին:  
Աչք ընողուն աչքը ձարի.  
Երաւներկու ձի ու ջորի  
Էկան անցան Յիսուս պարչան,  
Կարմիր կովը մորթեցին.

<sup>3</sup> Տե՛ս A Dictionary of Symbols, second edition, by J.E.Cirlof, Translated from the Spanish by Jack Sage, Foreword by Herbert Read, New York, 1971, p. 261, 91, 275, 211, 71, 30, 315, 28, 188.

<sup>4</sup> Ա. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ, ուսումնասիրություն, Երևան, 1960, Հայ ժողովրդական հանելուկներ (բնագրերի գիտական համահալար), Երևան, 1965:

Վեպ կերավ՝ զարմացավ,  
Վեպ չկերավ՝ ճարթեցավ (Էջ 91):

Ս. Հարությունյանը «Ներածության» մեջ քննում է նաև հմայիլ-աղոթքների պուտիկայի խնդիրները: Որոշ աղոթքներ կոչ-դիմուններ են, որոշը՝ երկխոսություններ, հարցնկարագրություններ, ժիսում-արգելումներով և հաստատում-հերքումներով: Դիմումկոչի միջոցով հավատացյալը օգնության է կանչում ինչ-որ ուժերի, որոնք իրեն ազատելու են ամեն տեսակի շարիքներից:

Ուրուժամե՛ր, Մարմարամե՛ր  
Հաղաղիկի և Քուրամ,  
Որ սարն եք կամ ձոր եք,  
Դուք հասուցեք ծառայիս Աստուծոյ  
Եւ ազատեցեք գողէ, հարամէ  
Ի սրէ, ի թրէ, ի խանչարէ  
Ի մզրախէ, ի թւանկէ  
Եւ յամենայն պատուհասէ, ամէն (Էջ 40):

Ժողովրդական աղոթքները բացառապես կիրառական նշանակություն են ունեցել: Բանագետը դրանք բաժանել է հետևյալ ենթախմբերի մեջ

- 1) Բուժաղոթքներ (այդ թվում՝ չար աչքի և ծննդկանի):
- 2) Առողջապահության և մարմնի մասերի մաքրագործման աղոթքներ:
- 3) Փորձանք-պատահարների և բնական աղետների կանխման աղոթքներ:
- 4) Հմայական կապքի և պահպանության աղոթքներ:
- 5) Գործնական նպատակների իրագործման աղոթքներ:

6) Երեկոյան և առավույան աղոթքներ:

7) Զանազան աղոթքներ (օրվա տարբեր ժամերի, երազի բարի կատարման, պանդուխտի, տարբեր սրբերի, ծիսական, նորալուսնի):

8) Զավեշտական աղոթքներ և պարողիաներ:

«Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» գրքի 215–500 էջերը զիտական հրատարակության համար պարտադիր ու պատշաճող մանրամասն ծանոթագրություններն են, ցանկերը, բառարանը:

Հեղինակը բնագրերի համար օգտագործել է բազմաթիվ տպագիր և ձեռագիր աղբյուրներ, հանդեսների, թերթերի, ամսագրերի, մենագրությունների փաստեր, իր գործընկերնե-

րի գրառումները, ինչպես նաև սեփական բանահյուսական նյութերի հավաքածուն: «Համառոտագրված աղբյուրների և գրականության ցանկը» վերոհիշյալ թեման ուսումնասիրողների համար իսկական մատենագիտական ուղեցույց է, որովհետև որպես հիմնարար աշխատասիրություն, այն նյութ է մատակարարում բանագիտական նոր թեմաների հետազոտման համար, ինչպես, օրինակ, բանահյուսության տարբեր ժանրերի, ասենք՝ հեքիափների և հմայական աղոթքների աղերսները, որոնք բավականին ակնառու են Ս. Հարությունյանի հրատարակած վերոհիշյալ հմայական աղոթքների բնագրերում:

Ծանոթագրությունները փաստահարուստ են և կարող են հարստացնել երիտասարդ հետազոտողների զիտելիքները:

Զար աչքի համար ասված հետևյալ աղոթքը հիշատակում է բյուզանդական պետական գործիչ Հովհաննոսի անունը:

37ե  
Աղոթիմ բութը մասով,  
Անարժանիս բժշկարանի աղոթքով,  
Աստվածամոր քաղցր կաթով,  
Սուրբ կուսանաց աղոթքով,  
Վայսունուվեց հայրապետաց աղոթքով:

Զար Հովհաննոս ճամփան էլիլ էր,

Գոռալեն, կարելստալեն կերթար:

Հշուու տեմն էլավ ու ասից.

- Զա ՛ Հովհաննոս, ու ՛ լ կերթաս:

- Կերթամ ամեն աղեկին:

- Չրտամ քեզի հրաման,

Չի ք ըլաս, չի ք դառնաս (Էջ 90):

Բանագետը այս աղոթքի ծանոթագրության մեջ ներկայացնում է IV դարի բյուզանդական իրականության երևելի պետական դեմքերից Հովհաննոս Ուրացողի կերպարը, որը շանքեր էր գործադրում երկիրը դեպի հեթանոտությունը վերադարձնելու, և որի կերպարը նույն դարի հոռմեացի պատմիչ Ամիանուս Մարցելինուսը (330–400 թթ.) վերածել է գրական առասպելի (Էջ 243)<sup>5</sup>:

Ծառ հարուստ է «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» գրքի բառարանը: Ս. Հարությունյանը ծանուցում է. «Բառարանում չեն բնդրկել այն բացահայտ բառա-

<sup>5</sup> Տե՛ս նաև Православная энциклопедия, под ред. Патриарха Московского и всея Руси Алексия II, т. II, М., 2001, с. 171.

իսաղերն ու բառային դարձվածները, որոնց իմաստն անստույգ է ու անմեկնելի» (Էջ 453): Հմայական աղոթքներում կան վաղնշական ժամանակներից եկող բառեր, որոնց բացատրությունները չկան այլ բառարաններում. զիտականորեն ճշգրիտ լինելու միտումով որոշ բառերի բացատրություններ տրվում են թեական ձևով: Այսպէս օրինակ՝

Ժան, Ժուն – ինչ-որ ծանր հիվանդություն, գուցե և ժանտախտ:

Ժառութեն – հավանաբար՝ բռնություն, դաժանություն: Քյու ստեղծած խոզին ժառութենով չառնես (-389), - քո ստեղծած հոզին բռնությամբ չառնես: Ճանաչողական արժեքունիք «Աղոթքների տարածման ազգագրական

շրջանների ցանկը (Էջ 479-481): Գրքի վերջում դրված են համառոտ եզրակացություններ անզլերեն ու ոռուսերեն լեզուներով:

Սարգիս Հարությունյանի «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» աշխատասիրությունը կոթողային ներդրում է հարուստ ավանդույթներ ունեցող հայ բանագիտության բնագավառում: Խիստ ցանկալի է, որ ՀՀ ԳԱԱ այս մեծարժեք գիրքը թարգմանի եվրոպական լեզուներով՝ դրանով իսկ նպաստելով՝ հայագիտության նոր ժամանակահատվածի միջազգային հնչեղությանը:

ԱԵԼԻՏԱ ԴՈՒՌԻԽԱՆՑԱՆ